

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՄԱՐԹ ՖՐԵՆԴՍ ՍՊԸ -ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/130 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	WDS-S7	Shenzhen WDS Electronic Technology Co., Ltd.	Ինֆրակարմիր զոդման կայանք Նախատեսված է միկրոսխեմաների ապամոնտաժման և վերամոնտաժման աշխատանքների համար: Սարքը ծեռքով կառավարվող է ապահովում է բարձր ճշգրտությամբ աշխատանք՝ օգտագործելով X, Y և Z առանցքների ուղղաձիգ ուղորդիչներ, որոնք թույլ են տալիս կատարել նուրբ ճշգրտումներ և արագ դիրքավորում: Կառավարումը իրականացվում է սենսորային Էկրանի միջոցով, որը միացված է միկրոկոնտրոլերին: Այն հնարավորություն ունի պահպանելու ջերմաստիճանի կորերի տվյալները, ապահովված է գաղտնաբառով մուտքի և փոփոխման ֆունկցիայով: Գործողության ընթացքում ջերմաստիճանի տվյալները ցուցադրվում են կորերի տեսքով, իսկ համակարգը ունի ակնթարթային վերլուծության հնարավորություն: Սարքը պետք է ապահովի անկախ ջերմաստիճանային կառավարում տաքացման երեք գոտիներում. վերին և միջին գոտիները տաքացվում են տաք օդով, իսկ ստորին գոտին՝ ինֆրակարմիրով: Վերին գոտու տաքացվող գլխիկը շարժական է, կարգավորվում է վերև-ներքև, և վերին և ստորին տաքացուցիչները կարող

են միաժամանակ աշխատել բազմաստիճան ջերմաստիճանային պրոֆիլով:
Ստորին ինֆրակարմիր տաքացուցիչը ապահովում է տպասալի
հավասարաչափ տաքացում: Սարքը օգտագործում է բարձր ճշգրտությամբ
K-տիպի թերմոզույգ՝ հետադարձ կապի կառավարման համար որի
ջերմաստիճանը վերահսկվում է $\pm 3^{\circ}\text{C}$ ճշգրտությամբ, ունի արտաքին
ջերմաստիճանի չափման ինտերֆեյս: Թերմոզույգի համար առկա է մեկ
միացման ինտերֆեյս: Տպասալը տեղադրվում է V-աձև ակոսում, իսկ
ունիվերսալ շարժական ամրակները պաշտպանում են եզրային
բաղադրիչները և կանխում տպասալի դեֆորմացիան: Համակարգը
համալրված է հոսքի հզոր օդափոխիչով, որը արագ սառեցնում է տպասալը:
Ներառված է վակուումային պոմպ և արտաքին վակուումային բռնիչ՝ BGA
տիպի պատյան ունեցող միկրոսխեմաների հարմարավետ տեղադրման և
հանման համար: Սարքը ունի ազդանշանային համակարգ, որը
տեղեկացնում է աշխատանքի ավարտի մասին, ինչպես նաև
«նախազգուշացման» ֆունկցիա: Անվտանգության համար սարքը ունի
արտակարգ կանգի կոճակ և ավտոմատ անջատման պաշտպանություն:
Ջերմաստիճանի անկառավարելի բարձրացման դեպքում համակարգը
ինքնաբերաբար անջատում է սնուցումը: Ներառված է կրկնակի
գերտաքացման պաշտպանություն: Սարքը պետք է լինի CE
սերտիֆիկացված: Սարքի նախատեսված ընդհանուր հզորությունը
առնվազն 4800 Վտ է՝ վերին տաքացնող տարրը ապահովում է միջինում 800
Վտ, ստորին տաքացնողը՝ ոչ պակաս 1200 Վտ, ստորին ինֆրակարմիր
տաքացնող համակարգը առնվազն՝ 2700 Վտ հզորություն: Սարքը սնվում է
AC 220V $\pm 10\%$, 50Hz ցանցից: Այն կարող է աշխատել տարբեր չափսերի
տպասալերի հետ. առավելագույն չափսը 480×345 մմ է, նվազագույնը՝
10×10 մմ: Տպասալի հաստության թույլատրելի միջակայքը կազմում է 0.3–5
մմ: Սարքը նախատեսված է նաև տարբեր չափսերի էլեկտրոնային
կոմպոնենտների համար որոնց չափսերն են սկսած 1×1 մմ-ից մինչև 60×60
մմ: Սարքի ընդհանուր չափսերը պետք է լինեն ոչ ավելի քան՝ 660×610×600

			մմ, զանգվածը ոչ ավել քան 35 կգ: Առաջարկվող սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:
--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО СМАРТФРЕНДС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БНЗ-БУДУЩЕ-26/130 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
2			